



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է  
ՀԱԱՀ գիտական խորհրդի  
կողմից

\_\_\_\_\_ 2017 թ. (արձ. №)

Վավերացնում եմ  
ՀԱԱՀ ռեկտոր

\_\_\_\_\_ Ա. Թարվերդյան

\_\_\_\_\_ . 2017 թ.

## ՀԱԱՀ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

ԵՐԵՎԱՆ 2017

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդման և կրթության որակի ապահովման նպատակով Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կողմից մշակվել է Էթիկայի կանոնագիրք, որը բաղկացած է բարձրագույն ուսումնական հաստատությունների ներբուհական երեք դերակատարների համար կանոնագրքերից և կարգավորում է Էթիկայի կանոնները՝ վարչական աշխատակազմի, պրոֆեսորադասախոսական աշխատակազմի և ուսումնառողների համար: Սույն փաստաթուղթը երեք դերակատարների համար մշակվել է Էթիկական վարվեցողության այն սկզբունքների հիման վրա, որոնք ներկայացված և նկարագրված են Եվրոպայի խորհրդի միջազգային մի շարք փաստաթղթերով սահմանված «Կրթության ոլորտում Էթիկայի, թափանցիկության և բարեվարքության համակարգային հարթակի» (ԷԹԻՆԵԴ) վերաբերյալ: Սույն փաստաթղթի ընդունումը ապահովում է Բուհերի ինքնավարության, իրավասությունների, ակադեմիական ազատության և հաշվետվողականության բարձրացումը, ինչպես նաև սահմանում է Էթիկայի կանոնների և ակադեմիական ազնվության վարքականոնների պահպանման հիմնական դրույթները բուհի երեք դերակատարների համար:

Եվրոպայի խորհրդի միջազգային մի շարք փաստաթղթերով սահմանված և ընդունված ՀԱԱՀ Էթիկայի կանոնագրքերում ամրագրված սկզբունքների նկատմամբ հարգանքն ու դրանց պահպանումը պարտադիր են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի բոլոր երեք դերակատարների համար:

## 1. Ընդհանուր դրույթներ

1.1. Հայաստանի ազգային ագրարային համալսարանի /այսուհետ՝ Համալսարան/ Էթիկայի կանոնագիրքը նորմատիվ իրավական փաստաթուղթ /ակտ/ է, որը սահմանում է Համալսարանում երեք դերակատարների միջև կապերի և վարքի վրա դրվող Էթիկայի սկզբունքները, կանոնները և նորմերը:

1.2. Սույն փաստաթղթի հիմնական նպատակն է՝

1) ամրագրել Էթիկային կարևորագույն արժեքները, սկզբունքները և նորմերը, որոնցով առաջնորդվում են համալսարանի վարչական ու ակադեմիական աշխատակազմը և ուսումնառողները:

2) սահմանել վարչական աշխատակազմի, ակադեմիական աշխատակազմի և ուսումնառողների, ինչպես նաև շահագրգիռ մարմինների միջև փոխհամագործակցության վարքագծի դրսևորման չափանիշները:

3) խթանել միասնական Էթիկայի սկզբունքներ և նորմեր հիմնված բարձր Էթիկական չափորոշիչների վրա՝ ստեղծելով և ապահովելով փոխադրարժ վստահության և հարգանքի միջավայր:

4) ապահովել համալսարանում սահմանված և ընդունված Էթիկայի նորմների ընկալման, պահպանման և իրականացման սկզբունքները՝ բոլոր երեք դերակատարների կողմից:

1.3 Սույն փաստաթղթում ամրագրված նորմերը և սկզբունքները տարածվում են վարչական ու ակադեմիական աշխատակազմի և ուսումնառողների վրա:

### 1.3. Էթիկայի կանոնագրքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Կանոնագրքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

**1) Գործատու** - Համալսարանը ի դեմս ռեկտորի:

**2) Վարչական աշխատակազմ**- ռեկտոր, պրոռեկտորներ, առաձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ, հաստատության կառավարման և ղեկավար բաժինների պետեր և վարիչներ, ղեկաններ, որոնք ղեկավարում են իրենց սահմանված ոլորտը և կրում պատասխանատվություն իրենց սահմանված ոլորտի շրջանակում և այդ կառույցների աշխատակիցներ:

**3)Պրոֆեսորադասախոսական աշխատակազմ** -ամբիոնի վարիչներ, պրոֆեսորներ, դոցենտներ, ավագ դասախոսներ, դասախոսներ և ասիստենտներ, որոնք իրականացնում են Համալսարանում գիտակրթական գործունեությունը:

**3)Ուսումնառողներ** - աշակերտներ, սովորողներ, ուսանողներ, մագիստրոսներ, ասպիրանտներ, որոնք սովորում են Համալսարանում՝ ՀՀ կրթության օրենքի, Բարձրագույն մասնագիտական կրթության մասին օրենքի, Համալսարանի կանոնադրությանը և այլ իրավական ակտերի համապատասխան:

**4) Բարձրագույն ուսումնական հաստատության դերակատարներ** - վարչական աշխատակազմ, պրոֆեսորադասախոսական կազմ, ուսումնառողներ և աշխատակիցներ:

**5) Կոլեկտիվ** - պրոֆեսորներ, դոցենտներ, ասիստենտներ, դասախոսներ, դոկտորանտներ, ասպիրանտներ, գիտական, վարչական և այլ աշխատողներ, ուսանողներ (բակալավր, մագիստրոս և ուրիշներ):

**6) Էթիկայի կանոնագիրք** - Բարձրագույն ուսումնական հաստատության ներքին շրջանառության փաստաթուղթ, որտեղ ընդհանուր դրույթներով ներկայացված են կրթական գործունեության մասնակիցների և շահառուների վարքագծի էթիկայի սկզբունքները, իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև կարգապահական տույժերի սահմանման և նշանակման մեթոդները:

**7) Էթիկայի հանձնաժողով** - Համալսարանի կողմից հաստատված էթիկայի հանձնաժողովի կանոններին համապատասխան ձևավորված մարմին, որը իրավասու է Էթիկայի սկզբունքների և նորմերի ապահովման, պահպանման և տարածման համար: Էթիկայի հանձնաժողովի լիազորությունները և պարտականությունները սահմանվում են Էթիկայի հանձնաժողովի կանոններով:

**1.4.** Էթիկայի սկզբունքները և կանոնները ներդրվում են Համալսարանի կազմակերպական մշակույթի ամրապնդման և զարգացման, հավատարմության ձևավորման, Համալսարանի առաքելությունն ու նպատակներն հասկանալու, աշխատակիցների և ուսումնառողների մոտիվացման մակարդակի բարձրացման, Համալսարանի ռազմավարության և գործունեության հիմնական ծրագրերի իրականացման և արդարության ու թափանցիկության ապահովման նպատակով:

**1.5.** Էթիկայի սկզբունքները և կանոնները միասնական են Համալսարանի ամբողջ կոլեկտիվի և մասնաճյուղերի համար: Համալսարանի վարչական աշխատակազմը, պրոֆեսորադասախոսական կազմը և ուսումնառողները իրենց վրա են վերցնում Էթիկայի սկզբունքների, նորմերի և կանոնների կողմից սահմանված պարտականությունները:

## **2. Կիրառման ոլորտ**

**2.1.** Էթիկայի սկզբունքները և կանոնները մշակված են տեղական և միջազգային մի շարք իրավական ակտերով սահմանված պահանջների հիման վրա: Էթիկայի սկզբունքները և կանոնները՝ այդ թվում բուհի երեք դերակատարների համար սահմանված էթիկայի սկզբունքների հիման վրա համապատասխան կանոնագրքերը ընդունվում են համալսարանի Գիտական խորհրդի կողից և հաստատվում է ռեկտորի կողմից:

**2.2** Էթիկայի սկզբունքները և կանոնները ներառում են բարոյաէթիկական չափանիշներ և վարքագծի դրսևորման սկզբունքներ ու կանոններ, որոնք տարածվում են Համալսարանի վարչական աշխատակազմի, պրոֆեսորադասախոսական աշխատակազմի և ուսումնառողների վրա:

2.3 Էթիկայի սկզբունքները և կանոններն ուղղված են Համալսարանի հեղինակության և վարկանիշի բարձրացմանը, աշխատակիցների /վարչական, ակադեմիական/ և ուսումնառողների միջև վարքագծի և հարգալից հարաբերությունների չափանիշների ձևավորման, պահպանման և արդարության ու թափանցիկության ապահովմանը:

2.4 Համալսարանը ներքին և արտաքին միջավայրի հետ փոխգործունեության ժամանակ շահագրգռված է Էթիկայի սկզբունքների և կանոնների պահպանման համար:

### **3. Կրթության ոլորտի էթիկայի սկզբունքները և կանոնները**

#### **3.1 Կրթության ոլորտի էթիկայի սկզբունքներ են.**

1. **Բարեվարքություն** - համալսարանի վարքագիծը համահունչ է մի շարք դրական բարոյական և էթիկական սկզբունքներին ու կանոններին, որոնք հենվում են հիմնական արժեքների վրա:

2. **Ազնվություն** - Համալսարանի բոլոր դերակատարները պետք է մշտապես խուսափեն ցանկացած խարդախությունից, ստախոսությունից, խաբեությունից, գողությունից, շորթումից կամ որևէ այլ անազնիվ արարքից:

3. **Ճշմարտություն** - Համալսարանի բոլոր դերակատարները պետք է ճշմարտությունն ասեն և չստեն բարձրագույն կրթության համակարգի ներսում իրականացվող ցանկացած տիպի հաղորդակցության ժամանակ:

4. **Թափանցիկություն** - Այս սկզբունքը պահանջում է ազատորեն հանրայնացնել ոչ միայն բուհի՝ որպես կազմակերպության, այլև բուհի բոլոր դերակատարների՝ որպես անհատների մասին տեղեկատվությունը, և այս պարտականության շրջանակը տարբեր է՝ պայմանավորված այն հանգամանքով, թե ինչ դերակատարի մասին է խոսքը:

5. **Հարգանք այլոց հանդեպ** - Համալսարանի բոլոր դերակատարները պետք է ցուցաբերեն բարձրագույն կրթության համակարգում ներգրավված բոլոր շահառուների և շահագրգիռ կողմերի արժանապատվության, ինչպես նաև Ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության նկատմամբ հարգանք, ճանաչեն բուհերի դերակատարների՝ իրենց մասնավոր կյանքը պաշտպանելու և Ֆիզիկական ու հոգեբանական բռնությունից պաշտպանված լինելու ընդհանուր իրավունքները:

6. **Վստահություն** - Համալսարանի բոլոր դերակատարները պետք է միանգամայն վստահ լինել միմյանց նկատմամբ ազնվության, ճշմարտացիության և բարեվարքության դրսևորման հարցում:

7. **Հաշվետվողականություն** - Համալսարանի բոլոր դերակատարները պատասխանատու են իրենց լիազորությունները պատշաճ կատարելու համար:

8. **Արդարացիություն** - Համալսարանի բոլոր դերակատարները միմյանց նկատմամբ պետք է վարվեն անկողմնակալ, առանց խտրականության և անազնիվ դրսևորումների:

9. **Հավասարություն, արդարություն և սոցիալական արդարություն** - Համալսարանի բոլոր դերակատարները պետք է պահպանեն կայունություն, հավասարություն և արդարություն՝ կրթական և սոցիալական արժեքների նկատմամբ, ինչպես նաև ճանաչեն ապագա և ներկա սերունդների իրավունքներն ու պարտականությունները: Պետք է գործնականում կիրառեն արդար, թափանցիկ, ներառական և կայուն քաղաքականություն և գործելակերպ՝ կապված տարիքի,

հաշմանդամության, գենդերի և գենդերային ինքնության, ռասայի, էթնիկ պատկանելիության, կրոնի և դավանանքի, պետք է ապահովեն բարձրագույն կրթության հասանելիությունը՝ ակադեմիական որակավորում ունեցող հնարավորինս մեծ քանակի անձանց համար:

**10. Կրթական համակարգի և կրթական հաստատությունների ժողովրդավարական ու էթիկական ղեկավարում և կառավարում** - Համալսարանի բոլոր դերակատարները պետք է ընդունեն, որ բուհերի ղեկավարումը և կառավարումը պետք է հիմնվեն բոլոր համապատասխան դերակատարների ժողովրդավարական ներգրավվածության վրա, և ղեկավարվեն էթիկայի հիմունքներով առաջնորդություն իրականացնող առաջնորդների կողմից:

**11. Որակյալ կրթություն** - Համալսարանի բոլոր դերակատարները պետք է ընդունեն իրենց անվերապահ հանձնառությունը հնարավորինս որակյալ կրթություն տրամադրելու հարցում:

**12. Անձի կատարելագործում և համակարգերի բարելավում** - Համալսարանի բոլոր դերակատարները պետք է ընդունեն բարձրագույն կրթության համակարգի շարունակական բարելավման գործում առավելագույն ներդրում կատարելու կարևորությունը:

**13. Ինստիտուցիոնալ ինքնավարություն/ինստիտուցիոնալ անկախություն** - Այս սկզբունքի մաս է կազմում ազգային կրթական համակարգում առանձին հաստատություններին համապատասխան ինքնավարություն և անկախություն շնորհելու և այն պահպանելու անհրաժեշտության ճանաչումը, ինչը կբացառի կրթության նկատմամբ չափազանց կենտրոնացված քաղաքական հսկողությունը:

3.2 Էթիկայի 13 սկզբունքների ապահովումը և պահպանում պարտադիր է համալսարանի վարչական ու ակադեմիական անձնակազմի, ուսումնառողների և աշխատակիցների համար:

3.3 Համալսարանի վարչական, պրոֆեսորական աշխատակազմը, ուսումնառողները և աշխատակիցները պարտավոր են առաջնորդվել՝ կոլեկտիվի անդամների միջև հարաբերություններում փոխադարձ հարգանքով՝ հիմնված գործարար էթիկայի, արդարության և ազնվության վրա:

3.4 Կոլեկտիվի ներսում հարաբերությունները կառուցվում են համերաշխության, փոխադարձ հարգանքի, աջակցության, համագործակցության, բարենպաստ հարաբերությունների, աշխատանքային կուլտուրայի կանոնների պահպանման վրա՝ արդյունավետ աշխատանքի և հանգստի ապահովման համար:

3.5 Համալսարանը պարտավոր է ապահովվել հասարակության և շահակիցների նկատմամբ իր թափանցիկությունը: Ինքնական և ինքնուրույն որոշում է տեղեկատվության ցանկը և կրում պարտավորություն այդ ցանկին համապատասխան տեղեկատվություն տրամադրել ներքին և արտաքին շահակիցներին:

3.6 Համալսարանում շեշտը դրվում է հարգանք մարդկանց արժանապատվության, ֆիզիկական և մտավոր կարողությունների վրա:

3.7 Համալսարանում արգելված են մարդուն ստորացնելու ցանկացած դրսևորում:

3.8 Համալսարանում դերակատարների միջև փոխհարաբերությունները կառուցվում են բացառապես փոխադարձ հարգանքի վրա, և չի թույլատրվում որևէ մեկի նկատմամբ կոպտություն, զազրախոսություն, պատվի և արժանապատվության խախտումներ, բարոյական կամ նյութական վնաս հասցնել:

3.9 Համալսարանում պետք է կիրառվի արդար և թափանցիկ, ներառական և կայուն քաղաքականություն և գործելակերպ՝ կապված տարիքի, հաշվանդամության, գենդերային խտրականության, ռասայի, էթնիկ պատկանելիության, կրոնի և դավանանքի: Համալսարանը պետք է ապահովի բոլոր հնարավոր պայմանները՝ վերջիններիս համար բարձրագույն կրթության հասանելությունը:

#### **4. Փոխհամագործակցությունը համալսարանի վարչական, պրոֆեսորադասախոսական և այլ աշխատակիցների ու ուսումնառողների միջև**

##### **4.1 Փոխգործունեության սկզբունքները**

1. Համալսարանի վարչական և պրոֆեսորադասախոսական աշխատակազմը և աշխատակիցները պետք է մասնակցեն յուրաքանչյուր աշխատակցի և ուսումնառողի ադապտացման և զարգացման փուլին, ստեղծեն անհրաժեշտ պայմաններ անձի ստեղծագործական և մտավոր պոտենցիալի բացահայտման և զարգացման համար:

2. Համալսարանի աշխատանքում լավագույն արդյունքների ձեռքբերման համար ողջունվում և խրախուսվում է վարչական և պրոֆեսորադասախոսական աշխատակազմի և ուսումնառողների համագործակցությունը և ակտիվ փոխգործունեությունը:

3. Ողջունվում է համալսարանի վարչական, պրոֆեսորադասախոսական աշխատակազմի, ուսումնառողների տարբեր տեսակի կազմակերպական փոխգործունեությունը՝ մասնավորապես՝ նախագծերի համատեղ իրականացում, աշխատանքային հարցերի քննարկում և լուծում, ժամանցի և այլ միջոցառումների կազմակերպում և անցկացում:

4. Համալսարանի վարչական և պրոֆեսորադասախոսական աշխատակազմը և աշխատակիցները, ինչպես նաև ուսումնառողները պետք է պահպանեն իրավական ակտերով և մի շարք այլ փաստաթղթերով իրենց համար սահմանված բոլոր սկզբունքները, նորմերը, ՀԱԱՀ կանոնադրությամբ սահմանված կետերը և էթիկայի սկզբունքներն ու կանոնները, ինչպես նաև աշխատանքային պայմանագրով սահմանված աշխատանքային կանոնները:

##### **4.2. Փոխգործունեությունը վարչակազմի և աշխատակիցների միջև**

1. Համալսարանի վարչական աշխատակազմը և ուսումնառողները առաջնորդվում են հետևյալ հիմնական սկզբունքով. կոլեկտիվի անդամների միջև հարաբերություններում փոխադարձ հարգանք, հիմնված էթիկայի սկզբունքների և կանոնների հիման վրա:

2. Վարչական աշխատակազմի կողմից հաշվի են առնվում աշխատակիցների անձնական շահերը և նրանց արժեքային առաջնայնությունները, ուշադրություն է դրաձվում աշխատակցի պոտենցիալի զարգացմանը:
3. Համալսարանի աշխատակիցը **առաջին հերթին** անձ է, դրա համար հարաբերությունները ղեկավարության հետ և կոլեկտիվում պետք է կառուցվեն հավասարության և փոխադարձ հարգանքի սկզբունքների վրա: **Երկրորդ հերթին** իր գործի մասնագետն է, դրա համար համալսարանի ղեկավարության և աշխատակցի կողմից պետք է իրականացվեն միջոցառումներ՝ ուղղված մասնագիտական որակի ինքնագարգացմանը և ձևավորմանը:
4. Աշխատակիցները կարող են համատեղել իրենց աշխատանքային գործունեությունը այլ կազմակերպությունում աշխատանքի հետ, եթե դա չի խանգարում իրենց աշխատանքային պարտականությունների որակյալ իրականացմանը, չի խանգարում համալսարանի շահերին և չի հակասում օրենքով կամ այլ իրավական ակտով սահմանված պահանջներին:
5. Համալսարանի ղեկավար կազմը և աշխատակիցները շահագրգռված են գիտելիքների փոխանակման, գիտական հետազոտությունների իրականացման, կրթական և գիտական գործընթացներում նոր մոտեցումների մշակման մեջ, կենտրոնանալով Համալսարանի զարգացման նպատակների և խնդիրների վրա:
6. Համալսարանի վարչական աշխատակազմը չպետք է իրականացնի այնպիսի գործողություններ, որոնք կարող են խանգարել Համալսարանի շահերին, երբեք չպետք է օգտագործեն ծառայողական ինֆորմացիան սեփական շահերից ելնելով, կամ Համալսարանի գործնական համբավին վնաս հասցնելու նպատակով:
7. Վարչական աշխատակազմի՝ ի դեմս ղեկավարների կողմից ողջունվում է պրոֆեսորադասախոսական աշխատակազմի կողմից ներկայացվող առաջարկությունները՝ ուսումնամեթոդական և գիտական գործընթացների կատարելագործման, ուսուցման նոր արդյունավետ ձևերի և մեթոդների վերաբերյալ:
8. Պրոֆեսորադասախոսական աշխատակազմն անընդհատ պետք է զարգացնի սեփական կոմպետենցիաները, բարձրացնի որակավորման և գործնական հմտությունների մակարդակը, ձգտի պրոֆեսիոնալիզմի բարձր մակարդակի:
9. Պրոֆեսիոնալիզմը և կառուցվածքային համագործակցությունը Համալսարանի գործունեության արդյունավետության գերակա խնդիրներն են: Համալսարանի աշխատակիցները պետք է աջակցեն գործարար և ընկերական փոխհարաբերությունների հաստատման:
10. Ստորաբաժանումների միջև կոնֆլիկտային իրավիճակի ստեղծման ժամանակ կոնֆ-լիկտի լուծման գերակա ուղղությունը Համալսարանի շահերի պահպանումն է:
11. Չի թույլատրվում աշխատակիցների կողմից նրանց կոլեգաների անձնային թերությունների և անձնական կյանքի քննարկումը:



12. Վարչական աշխատակազմը և բոլոր աշխատակիցները պետք է վերահսկեն իրենց վարքը, զգացմունքները, թույլ չտալով անձնական համակրանքի, տրամադրության ազդեցությանը ազդել գործնական որոշումների վրա, կարողանալ կանխատեսել սեփական գործողությունների և որոշումների հետևանքները, հավասարապես կոռեկտ վերաբերվել կոլեգաների և ուսումնառողների հետ՝ անկախ ծառայողական կամ սոցիալական դիրքից:

13. Աշխատանքային հարցերի շուրջ շփվելիս վարչակազմի և պրոֆեսորադասախոսական աշխատակազմի ու աշխատակիցների կողմից անթույլատրելի է ցանկացած ճնշման գործադրման փորձը, ինչպես նաև այնպիսի որոշումների կայացումը, որը չի համապատասխանում էթիկայի սկզբունքներին և կանոններն և համալսարանի շահերին: Նույն պաշտոնական մակարդակի վրա գտնվող աշխատակիցների միջև խնդիրների լուծումը թույլ է տրվում աշխատանքային կարգով, եթե դա նպաստում է աշխատանքի առավել արդյունավետ կատարմանը:

### **4.3 Փոխգործունեությունը պրոֆեսորադասախոսական կազմի և ուսումնառողների միջև**

1. Ծփվելիս պրոֆեսորադասախոսական կազմը և ուսումնառողները պարտավոր են թույլ չտալ անհարգալից վերբերմունք միմյանց նկատմամբ, չօգտագործել անպարկեշտ բառեր և վերաբերմունք:

2. Պրոֆեսորադասախոսական աշխատակազմը և ուսումնառողները պարտավոր են պահպանել հարաբերություններ՝ հիմնված փոխադարձ աջակցության ու հարգանքի վրա:

3. Պարապմունքից ուշանալու դեպքում ուսամնառողը պետք է ներողություն խնդրի և նստի լսարանի մոտակա ազատ տեղում: Դասախոսը իրավունք ունի ուսանողին կարգապահության խախտման համար հեռացնել դասերից: Ուսումնառողը պարտավոր է ենթարկվել չմտնելով վիճաբանության մեջ: Դասը ավարտելուց հետո անհրաժեշտ է քաղաքավարի բացատրել ուշացման պատճառը և ներողություն խնդրել դասախոսից:

4. Ուսումնառողի կողմից կոնֆլիկտային վարքի դրսևորման դեպքում պրոֆեսորադասախոսական աշխատակազմը պետք է համապատասխան քայլեր ձեռնարկի ուսանողի մոտ զգացմունքային լարվածությունը հանելու համար, այնուհետև հանգիստ բացատրի նրան խնդրի լուծման կարգը:

5. Արգելվում է դասերին ներկայանալ սպորտային համազգեստով /բացառությամբ ֆիզկուլտուրա առարկայից/:

6. Համալսարանում պարապմունքների ժամանակ անհրաժեշտ է պահպանել լռություն և կարգապահություն:

7. Պրոֆեսորադասախոսական աշխատակազմը և ուսումնառողները պարտավոր են հետևել համալսարանի նյութատեխնիկական բազայի պահպանմանը և անվտագությանը:

## **5. Արտաքին կառույցների և ՉԼՄ-երի հետ փոխգործունեության կանոններ**

**5.1** Արտաքին կառույցների հետ փոխգործունեության ժամանակ Համալսարանը մտնում է բաց և ազնիվ փոխհարաբերությունների մեջ, պահպանելով գործնական էթիկայի չափանիշները:

Արտաքին կառույցների հետ հարաբերություններում Համալսարանը ղեկավարվում հետևյալ սկզբունքներով`

- 1) պատասխանատվություն և հետևողականություն Համալսարանի պարտականությունները իրականացնելիս,
- 2) էթիկայի սկզբունքների և կանոնների պահպանում,
- 3) ներկայացվող ինֆորմացիայի բաց և թափանցիկ լինելը,
- 4) համաձայնության որոնում` տարաձայնությունների և վեճերի առաջացման դեպքում:
- 5) Համալսարանի անունից հանդես եկող վարչական և պրոֆեսորադասախոսական աշխատակազմի և ուսումնառողների գործնական վարքի նորմերի և կանոնների պահպանում:

**5.2** Համալսարանը զանգվածային լրատվական միջոցների հետ փոխհարաբերություններում հանդես է գալիս բաց և ազնիվ: ՉԼՄ-երի հետ փոխգործունեության ժամանակ Համալսարանի աշխատակիցները և ուսումնառողները`

- 1) գործում են ելնելով Համալսարանի շահերից,
- 3) չպետք է թույլ տան ոչ հավաստի տեղեկատվության օգտագործումը,
- 4) չպետք է թույլ տան ոչ հավաստի տեղեկատվության տարածումը և Համալսարանի գործունեության փաստերի աղավաղումը:

# **ՀԱՄՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ**

## **1. Նշանակություն և կիրառման ոլորտը:**

Սույն կանոնագիրքը նպատակ ունի ապահովելու բարձրագույն ուսումնական հաստատությունների վարչական աշխատակազմի համար Էթիկայի սկզբունքները և կանոնները, իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև Էթիկայի սկզբունքները չպահպանելու դեպքում համապատասխան կարգապահական տույժերը:

## **2. Սկզբունքներ:**

ՀՀ օրենսդրությամբ և ՀԱՄՀ կանոնադրությամբ, ինչպես նաև սույն Էթիկայի կանոնագիրքով և այլ իրավական ակտերի համաձայն ընդունված վարչական աշխատակազմի ղեկավար կազմի և աշխատակիցների վարքագիծը պետք համապատասխանի Էթիկական վարվեցողության ընդհանուր սկզբունքներին և կանոններին:

Սույն փաստաթղթում ամրագրված սկզբունքները կիրառվում են վարչական աշխատակազմի՝ ռեկտոր, պրոռեկտորներ, վարչության պետեր, առաձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների տնօրեններ, հաստատության կառավարման և ղեկավար բաժինների պետեր և վարիչներ, որոնք ղեկավարում են իրենց սահմանված ոլորտը և կրում պատասխանատվություն իրենց սահմանված ոլորտի շրջանակում և աշխատակիցներ համար:

## **3. Վարչական աշխատակազմի՝ Ղեկավար կազմի իրավունքներն ու պարտականությունները:**

Համալսարանը, որպես գործատու, ի դեմս իր ղեկավարության /ռեկտորի/, հանդես է գալիս որպես աշխատանքային հարաբերությունների կողմ և աշխատանքային օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների համապատասխան իրավասու է իրականացնել աշխատանքային հարաբերությունները կարգավորող կազմակերպչական, իրավական, ֆինանսատնտեսական, կարգապահական, ինչպես նաև աշխատողների աշխատանքի ընդունվելու, այլ աշխատանքի փոխադրելու, աշխատանքից ազատելու, կարգապահական տույժեր և խրախուսանքներ կիրառելու, աշխատանքի վարձատրության և այլ գործառույթներ իրականացնելու:

### **3.1 Վարչական աշխատակազմի՝ Ղեկավար կազմի իրավունքներն են.**

- 1) առաջարկություններ ներկայացնել համալսարանի հեռանկարային պլանները մշակելու նպատակով,
- 2) առաջարկություններ ներկայացնել համալսարանի զարգացմանն ուղղված քայլերի վերաբերյալ,
- 3) նախապատրաստել և հոգաբարձուների խորհրդի քննարկմանը ներկայացնել հարցերի, առաջարկությունների և որոշումների նախագծեր.
- 4) ստանալ տեղեկություններ համալսարանի գործունեությանը վերաբերող ցանկացած հարցի վերաբերյալ,
- 5) ներկայացնել Համալսարանը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,
- 6) համալսարանի անունից հանդես գալ առանց լիազորագրի,
- 7) իրականացնել գործադիր-կարգադրիչ ֆունկցիաներ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում,

8) իրականացնել աշխատանքներ հոգաբարձուների խորհրդի որոշումների կատարման ուղղությամբ,

9) սահմանված կարգով աշխատանքի ընդունել և աշխատանքից ազատել համալսարանի աշխատողներին, այդ թվում՝ Համալսարանի առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների, հիմնարկների ղեկավարներին և աշխատողներին,

10) իր իրավասության սահմաններում արձակել հրամաններ, հրահանգներ, տալ համապատասխան աշխատանքների կատարման համար տալ ցուցումներ և վերահսկել դրանց կատարումը,

11) աշխատողների նկատմամբ կիրառել խրախուսական և կարգապահական պատասխանատվության միջոցներ՝ տույժեր,

12) հոգաբարձուների խորհրդին ներկայացնել Էթիկայի կանոնակարգի կիրառման արդյունավետության վերաբերյալ տեղեկատվություն, որը իրենից կներկայացնի տարեկան հաշվետվություն բուհի կողմից Էթիկայի կանոնակարգի իրականացման և այդ գործընթացի նկատմամբ մշտադիտարկման մասին անհրաժեշտ տվյալների վերաբերյալ,

13) Համալսարանի Էթիկայի հանձնաժողովին տեղեկացնել գործող օրենսդրության կամ Էթիկայի սկզբունքների ցանկացած խախտման մասին,

14) Ստանալ իր պարտականությունների կատարմամբ պայմանավորված ծախսերի փոխհատուցում:

### **3.2 Վարչական աշխատակազմի` Ղեկավար կազմը պարտավոր է.**

1) վեր դասել հաստատության շահերն իրենց սեփական շահերից և չձգտել շահույթ ստանալ պաշտոնական դիրքի օգտագործմամբ կամ չարաշահելով այն,

2) չընդունել որոշակի եղանակով գործելու կամ չգործելու որևէ հանձնագիր, իրենց նշանակած կազմակերպությունից կամ մարմնից, կամ չընդունել որևէ հրահանգ ցանկացած անձից, քաղաքական կուսակցությունից, արհմիությունից, կրոնական կամ որևէ այլ արտաքին աղբյուրից,

3) գերծ մնալ իրենց կամ իրենց ընտանիքի անմիջական անդամի որևէ անձնական շահ հետապնդող աշխատանքային միջհարաբերություններից,

4) չպահանջել, կամ չընդունել կաշառք կամ որևէ այլ ֆինանսական միջոց, կամ չփորձել ստանալ կամ ընդունել այլ անձնական օգուտ, որը որոշումներ կայացնելիս կարող է ազդեցություն գործել,

5) անմիջապես հայտնել կաշառելու կամ անձնական օգուտ առաջարկելու ցանկացած փորձի մասին համապատասխան մարմիններին,

6) հաստատության կառավարման և ղեկավարման հետ կապված կանոններ ընդունելու և կիրառելու իրենց կոլեկտիվ իրավասությունը կամ անձնական պատվիրակված իրավասությունն իրականացնելիս ապահովել Կանոնագրքով սահմանված Էթիկայի սկզբունքները և կանոնները,

7) սահմանված կարգով իրենց պարտականությունները կատարման ընթացքում գործել ելնելով միայն Համալսարանի շահերից՝ պահելով սույն կանոնակարգով սահմանված Էթիկայի սկզբունքներն ու կանոնները,

9) սահմանված կարգով աշխատողին տրամադրել վճարվող և /կամ/ չվճարվող արձակուրդ, ծառայողական գործուղում,

- 10) կատարել օրենքով, այլ իրավական ակտերով, Համալսարանի կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով, ինչպես նաև կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով նախատեսված այլ պարտականություններ,
- 11) չվատնել հաստատության ռեսուրսները, կամ սխալ չօգտագործել հաստատության տնօրինության տակ գտնվող անձնական կամ առևտրային տեղեկությունները՝ անձնական կամ որևէ այլ անձի համար շահ ստանալու նպատակով,
- 12) ապահովել, որ իրենց իրավասության ներքո գտնվող բոլոր անձինք իրագրել լինեն համապատասխան օրենսդրությանն ու կանոններին և դրանք չպահպանելու հետևանքներին և նպաստել Էթիկայի սկզբունքների և կանոնների պահպանմանը:

#### **4. Վարչական աշխատակազմի՝ աշխատակիցների իրավունքներն ու պարտականությունները:**

##### **4.1 Վարչական աշխատակազմի՝ աշխատակիցների իրավունքներն են.**

- 1) առաջարկություններ ներկայացնել իր ղեկավարին՝ Համալսարանի հեռանկարային պլանները մշակելու նպատակով,
- 2) առաջարկություններ ներկայացնել իր ղեկավարին՝ Համալսարանի զարգացմանն ուղղված քայլերի վերաբերյալ,
- 3) մասնակցել որոշումների կայացման գործընթացին համալսարանի ֆակուլտետի կամ ամբիոնների մակարդակով՝ ըստ վերապահված գործունեության շրջանակի,
- 4) զբաղվել մասնագիտական գործունեության կազմակերպման և նյութատեխնիկական ապահովման հարցերով,
- 5) իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ներկայացնել Համալսարանը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.
- 6) չընդունել որևէ հանձնարարություն իր ղեկավար մարմնից, եթե վերջինս հակասում է սահմանադրությամբ կամ օրենսդրությամբ սահմանված պահանջներին,
- 8) համալսարանի Էթիկայի հանձնաժողովին տեղեկացնել գործող օրենսդրության կամ Էթիկայի սկզբունքների ցանկացած խախտման մասին:
- 9) ստանալ իր պարտականությունների կատարմամբ պայմանավորված ծախսերի փոխհատուցում:

##### **4.2 Վարչական աշխատակազմի՝ աշխատակիցների պարտականություններ են.**

- 1) վեր դասել հաստատության շահերն իրենց սեփական շահերից և չձգտել շահույթ ստանալ իր աշխատանքային դիրքի չարաշահմամբ,
- 2) գերծ մնալ իրենց կամ իրենց ընտանիքի անմիջական անդամի որևէ անձնական շահ հետապնդող աշխատանքային միջհարաբերություններից,
- 3) կատարել համալսարանի ղեկավար մարմինների որոշումները՝ եթե վերջինն և չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված, համալսարանի կանոնադրությամբ և համալսարանի այլ իրավական ակտերով սահմանված կանոնների պահանջներին,
- 4) նպաստել ուսումնական գործընթացի, անցկացվող գիտական հետազոտությունների արդյունավետությունը,
- 5) մշտապես բարձրացնել իրենց մասնագիտական որակավորումը,

- 6) կատարել աշխատանքներ ղեկավար անձնակազմի կողմից իրեն վերապահված լիազորությունների և աշխատասանքների կատարման ուղղությամբ,
- 7) չպահանջել, կամ չընդունել որևէ կաշառք կամ որևէ այլ ֆինանսական միջոց, կամ չփորձել ստանալ կամ ընդունել որևէ այլ անձնական օգուտ, որը կարող է ազդեցություն գործել իրենց վերապահված աշխատանքը կատարելիս,
- 8) անմիջապես հայտնել կաշառելու կամ անձնական օգուտ առաջարկելու ցանկացած փորձի մասին իր վերադասին, վիճահարույց հարցերի դեպքում Էթիկայի հանձնաժողով,
- 9) չվատնել հաստատության ռեսուրսները կամ սխալ չօգտագործել հաստատության տնօրինության տակ գտնվող անձնական կամ առևտրային տվյալները:

**5. Վարչական անձնակազմի համար սահմանվող կարգապահական տույժեր և խրախուսանքներ.**

- 1) Համալսարանի վարչական աշխատակազմի՝ ղեկավար անձնակազմի և աշխատակիցների համար սահմանվող կարգապահական տույժերը պետք է հիմնվեն արդարության և պատշաճ ծանուցման սկզբունքների վրա և պետք է համապատասխանեն ՀՀ գործող օրենսդրության, համապատասխան իրավական ակտերի և Համալսարանի ներքին կարգապահական կանոնների պահանջներին:
- 2) Համալսարանի վարչական աշխատակազմի՝ ղեկավար անձնակազմի և աշխատակիցների համար սահմանվող խրախուսանքները պետք է հիմնվեն արդարության և թափանցիկության սկզբունքների վրա և համապատասխանեն ՀՀ գործող օրենսդրության, համապատասխան իրավական ակտերի և Համալսարանի ներքին կարգապահական կանոնների պահանջներին:
- 3) Համալսարանի վարչական աշխատակազմի համար սահմանվող կարգապահական տույժերը քննարկվում է ՀԱԱՀ Էթիկայի հանձնաժողովի կողմից՝ իրավական ակտերով և ՀԱԱՀ Էթիկայի հանձնաժողովի կանոններով սահմանված պահանջների համապատասխան:
- 4) Համալսարանի վարչական աշխատակազմի համար սահմանվող խրախուսանքները քննարկվում է ՀԱԱՀ Էթիկայի հանձնաժողովի կողմից՝ իրավական ակտերով և ՀԱԱՀ Էթիկայի հանձնաժողովի կանոններով սահմանված պահանջների համապատասխան:

# **ՀԱՎՀ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱԾԽԱՏԱԿԱԶՄԻ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ**

## **1. Նշանակություն և կիրառման ոլորտը:**

Մույն կանոնագրքը նպատակ ունի ապահովել համալսարանի պրոֆեսորա-դասախոսական աշխատակազմի համար էթիկայի սկզբունքները և կանոնները, իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև էթիկայի սկզբունքները և կանոնները չպահպանելու դեպքում՝ համապատասխան կարգապահական տույժերը:

## **2. Սկզբունքներ:**

ՀՀ օրենսդրությամբ և ՀԱՎՀ կանոնադրությամբ, ինչպես նաև էթիկայի կանոնագրքով և այլ իրավական ակտերի համաձայն ընդունված պրոֆեսորադասախոսական աշխատակազմի վարքագիծը պետք համապատասխանի ընդունված ընդհանուր էթիկական սկզբունքներին և կանոններին:

Մույն փաստաթղթում ամրագրված սկզբունքները կիրառվում են պրոֆեսորա-դասախոսական աշխատակազմի՝ ամբիոնի վարիչներ, պրոֆեսորներ, դոցենտներ, ավագ դասախոսներ, դասախոսներ և ասիստենտներ, որոնք Համալսարանում իրականացնում են գիտակրթական գործունեությունը և կրում պատասխանատվություն իրենց սահմանված ոլորտի շրջանակում:

## **3. Պրոֆեսորադասախոսական աշխատակազմի՝ իրավունքներն ու պարտականությունները:**

### **3.1 Համալսարանի պրոֆեսորադասախոսական աշխատակազմը իրավունք ունի.**

- 1) օրենքով, Համալսարանի կանոնադրությամբ, այլ և համապատասխան ներքին իրավական ակտերով սահմանված կարգով մասնակցել Համալսարանի կառավարման գործընթացին,
- 2) ազատ արտահայտվելու և տեղեկություն ստանալու,
- 3) գնահատվել որպես գիտնական և դասավանդող՝ ելնելով մտավոր և մասնագիտական չափանիշներից, այլ ոչ թե քաղաքական ու կրոնական հայացքներից, անձնական նախապատվության կամ որևէ այլ հանգամանքից,
- 4) որոշել իր կողմից դասավանդվող դասընթացների բովանդակությունը՝ ուսումնական պլանի պահանջներին համապատասխան,
- 5) Համալսարանի գնահատման քաղաքականությունների և նախապես սահմանված գնահատման չափանիշների հիման վրա՝ գնահատել ուսանողների կատարողականը և ձեռքբերումները,
- 6) չընդունել որոշակի ձևով գործելու կամ չգործելու որևէ հրահանգ ցանկացած անձից, բացառությամբ՝ վերադասի, կամ որևէ քաղաքական կուսակցությունից, արհմիությունից կամ կրոնական խմբից, բացառությամբ՝ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի,
- 7) հայտնել օրենսդրության կամ էթիկայի սկզբունքների և կանոնների ցանկացած ենթադրյալ խախտման մասին իր ղեկավարին կամ էթիկայի հանձնաժողովին՝ առանց իր համար անբարենպաստ հետևանքներ առաջանալու մտավախության:

### **3.2 Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը պարտավոր է.**

- 1) «Հայաստանի Հանրապետության «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքների և իրավական այլ ակտերի պահանջներին համապատասխան կատարել՝ կրթական չափորոշիչներով, ուսումնական պլաններով, առարկայական ծրագրերով, օրացույցային պլաններով, դասացուցակով, ուսանողների գիտելիքների սուզման և գնահատման սահմանված կարգերով գործընթացները, Համալսարանի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով նախատեսված ուսումնական և ուսամնադաստիարակչական գործընթացները.
- 2) մասնակցել գիտական, հետազոտական աշխատանքներին և դրանց ներդրմանը,
- 3) սահմանված կարգով պարբերաբար բարձրացնել իր մանկավարժական և մասնագիտական հմտությունները, կարողությունները և որակավորումը.
- 4) ղեկավարել ուսանողների ուսումնադաստիարակչական և ուսամնագիտահետազոտական աշխատանքները,
- 5) վեր դասել հաստատության շահերը սեփական շահերից, և չձգտել շահույթ ստանալ՝ իր կողմից իրականացվող գործունեության շրջանակում,
- 6) հաստատության ներսում կամ դրանից դուրս որևէ անձից կամ խմբից չպահանջել կամ չընդունել կաշառք կամ որևէ այլ անօրինական ֆինանսական միջոց, կամ չփորձել ստանալ կամ ընդունել որևէ անձնական օգուտ, որը կարող է ազդել իր վրա աշխատանքի ընթացքում, և հաստատության կանոններով նախատեսված համապատասխան մարմնին անմիջապես հայտնել կաշառելու կամ անձնական շահ առաջարկելու ցանկացած փորձի մասին,
- 7) չվատնել հաստատության ռեսուրսները, կամ սխալ չօգտագործել հաստատության տնօրինության տակ գտնվող անձնական կամ առևտրային տեղեկությունները, այդ թվում՝ մտավոր սեփականության մասին տեղեկությունները՝ անձնական կամ որևէ այլ անձի կամ խմբի համար շահ ստանալու նպատակով,
- 8) դրսևորել էթիկայի սկզբունքներին և կանոններին համապատասխան վարքագիծ՝ պրոֆեսորադասախոսական աշխատակազմի կամ ընդունելության, գնահատման, քննության և ուսանողներին վերաբերող այլ գործողությունների հետ առնչվող մարմինների նշանակման, առաջխաղացման կամ այլ լիազորություններին վերաբերող հարցերում մասնակցություն ցուցաբերելիս,
- 9) հարգել համալսարանի ուսումնառողներին և խուսափել ցանկացած շահագործումից կամ հետապնդումից, կամ ուսումնառողների նկատմամբ խտրական վերաբերմունքից,
- 10) հարգել ուսումնառողների միջև տարբերությունները՝ ներառյալ (բայց չսահմանափակվելով) քաղաքական և կրոնական կողմնորոշումները,
- 11) պաշտպանել ուսումնառողի ակադեմիական ազատությունը,
- 12) հետազոտական գործունեության ընթացքում չգրադվել գրագողությամբ, կատարել հղումներ և ուրիշի աշխատանքն իրեն չվերագրել, չկեղծել արդյունքները և պահպանել էթիկայի սկզբունքները և կանոնները՝ անձնական տվյալների պաշտպանության նպատակով,
- 13) պատշաճ իրականացնեն գիտական հետազոտությունները, ժամանակին ներկայացնեն օբյեկտիվ և անաչառ հաշվետվություն կատարված աշխատանքի վերաբերյալ,



14) լինեն ազնիվ հետազոտության վերաբերվող ֆինանսական ռեսուրսների բախշման գործընթացում և առաջնորդվեն <<ազնիվ և թափանցիկ հաշվապահություն>> սկզբունքով:

15) խտրականություն չդրսևորել կամ չհետապնդել գործընկերներին, հարգել բազմակարծությունը և արտահայտվելու ազատությունը,

16) ապահովել, որ իրենց իրավասության ներքո գտնվող բոլոր անձինք իրազեկ լինեն համապատասխան օրենսդրությանը և կանոններին, սույն կանոնագրքով սահմանված կետերին և դրանք չպահպանելու հետևանքներին:

### **3.3 Պրոֆեսորադասախոսական աշխատակազմը ուսումնառողի ունակությունների գնահատման ժամանակ իրավունք չունի՝**

1) ուսանողից/ նրա բարեկամից վերցնել դրամական և այլ տեսակի նյութական կաշառք,

2) իրականացնել սեռական բնույթի գործողություններ,

3) ուսանողների միջև դնել տարբերություն սուբյեկտիվ պատճառներից ելնելով, այլ միայն հիմնվել նրանց գիտելիքների վրա,

4) աչք փակել ուսանողի կողմից իրականացվող գրագողության վրա,

5) նշանակել ուսանողին գնահատական՝ պարտադրելով նրան գնել իր կողմից հրատարակված ուսումնական նյութեր,

6) ցածրացնել ուսանողի անձնական արժանապատվությունը /բարձրացնել ձայնը ուսանողի հետ խոսելիս կամ կիրառել գռեհիկ բառեր կամ արտահայտություններ/,

7) հրաժարվել բարդ նյութի բացատրությունից /ժամանակի իրական բացակայության դեպքում անհրաժեշտ է հայտարարել խորհրդատվության ժամեր՝ լրացուցիչ հարցերին պատասխանելու համար/,

8) քննության կամ ստուգարքի հանձնման համար դնել առարկայական ծրագրից դուրս պահանջներ,

9) փոփոխել գնահատման չափանիշները կամ քննության վերահարձնման պայմանները՝ ելնելով սեփական տրամադրվածությունից,

### **3.4 . Պրոֆեսորախասախոսական աշխատակազմը իրավունք չունի.**

1) պահանջել լրացուցիչ վճար ուսումնական պլանով սահմանված կրթական ծառայությունների մատուցման համար,

2) ուսումնական պարապունքներին ացկացնել քաղաքական կամ կրոնական քարոզչություն,

3) օգտագործել իր դիրքը ուսանողների հետ առնչվելիս՝ անձնական շահը հետապնդելու նպատակով,

4) Համալսարանի պրոֆեսորադասախոսական աշխատակազմը շահակիցներին պարտավոր է տրամադրել ճշգրիտ և լիարժեք տեղեկություններ՝

- համալսարանի առակա մասնագիտությունների վերաբերյալ,

- ուսանողների թվաքանակի և նրանց առաջադիմության վերաբերյալ,

- վիճակագրական տվյալներ տարբեր կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության ցուցանիշների վերաբերյալ,

- աշխատակազմի որակավորումների և մասնագիտական որակների վերաբերյալ,

- մասնագիտությունների կրթական ծրագրերի բովանդակության վերաբերյալ,

-համալսարանի կրթական համակարգի, քաղաքականության, գործող իրավական ակտերի, կանոնակարգերի և ընթացակարգերի մասին:

5) Համալսարանի պրոֆեսորադասախոսական աշխատակազմը նպաստում է համալսարանի գործունեության վերաբերող տեղեկատվության հավաքագրմանը և տարածմանը, ներքին և արտաքին շահակիցների շրջանում տեղեկատվության տարածմանը,

6) Համալսարանի պրոֆեսորադասախոսական աշխատակազմը պարտավոր է պահպանել էթիկայի սկզբունքները և ցուցաբերել հարգայից վերաբերմունք իր կոլեգաների հետ փոխհամագործակցելիս,

7) Համալսարանի պրոֆեսորադասախոսական աշխատակազմը պարտավոր է պահպանել էթիկայի սկզբունքները և կանոնները, ցուցաբերել հարգայից վերաբերմունք ուսումնառողների հետ փոխհարաբերություններում,

8) Չի թույլատրվում կոպտությունը, անհարգայից վերաբերմունքը, այլ անձանց պատվի և արժանապատվության խախտումը, նրանց բարոյական կամ նյութական վնասի պատճառումը, անօրինական գործողությունները:

9) Պրոֆեսորադասախոսական աշխատակազմը պարտավոր է պահպանել էթիկայի սկզբունքները և կանոններն՝ ուսումնառողների և աշխատակիցների՝ հետ հիմնաված համագործակցության և փոխադարձ հարգանքի վրա:

10) Պրոֆեսորադասախոսական աշխատակազմը պարտականությունները իրականացնելու ժամանակ իրավունք չունի օտագործել ոգելից խմիչք և ծխել Համալսարանի մասնաշենքերում /ներքին կարգապահական կանոններով սահմանված կարգի համապատասխան:

### **Պրոֆեսորադասախոսական աշխատակազմի համար սահմանվող կարգապահական տույժեր և խրախուսանքները.**

1) Համալսարանի պրոֆեսորադասախոսական աշխատակազմի համար սահմանվող կարգապահական տույժերը պետք է հիմնվեն արդարության և պատշաճ ծանուցման սկզբունքների վրա և պետք է համապատասխանեն ՀՀ գործող օրենսդրության, համապատասխան իրավական ակտերի և Համալսարանի ներքին կարգապահական կանոնների պահանջներին:

2) Համալսարանի պրոֆեսորադասախոսական աշխատակազմի համար սահմանվող խրախուսանքները պետք է հիմնվեն արդարության և թափանցիկության սկզբունքների վրա և համապատասխանեն ՀՀ գործող օրենսդրության, համապատասխան իրավական ակտերի և Համալսարանի ներքին կարգապահական կանոնների պահանջներին:

3) Համալսարանի պրոֆեսորադասախոսական աշխատակազմի համար սահմանվող կարգապահական տույժերը քննարկվում են ՀԱԱՀ Էթիկայի հանձնաժողովի կողմից՝ իրավական ակտերով և ՀԱԱՀ Էթիկայի հանձնաժողովի կանոններով սահմանված պահանջների համապատասխան:

4) Համալսարանի պրոֆեսորադասախոսական աշխատակազմի համար սահմանվող խրախուսանքները քննարկվում են ՀԱԱՀ Էթիկայի հանձնաժողովի կողմից՝ իրավական ակտերով և ՀԱԱՀ Էթիկայի հանձնաժողովի կանոններով սահմանված պահանջների համապատասխան:

# **ՀԱՄՀ ՈՒՍՈՒՄՆԱԾՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ**

## **1. Նշանակություն և կիրառման ոլորտը**

Սույն կանոնագրքի նպատակ ունի ապահովելու բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսումնառողների համար Էթիկայի սկզբունքները և կանոնները, իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև Էթիկայի սկզբունքները և կանոնները չպահպանելու դեպքում համապատասխան կարգապահական տույժերը:

## **2. Սկզբունքներ**

ՀՀ օրենսդրությամբ և ՀԱՄՀ կանոնադրությամբ, ինչպես նաև սույն Էթիկայի կանոնագրքով և այլ իրավական ակտերի համաձայն ընդունված ուսումնառողների վարքագիծը պետք է համապատասխանի Էթիկական վարվեցողության ընդհանուր սկզբունքներին և կանոններին:

Սույն փաստաթղթում ամրագրված սկզբունքները և կանոնները կիրառվում են և տարածվում բոլոր ուսումնառողների վրա, որոնք սովորում են Համալսարանում ՀՀ կրթության օրենքին, Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքի, Համալսարանի կանոնադրության և այլ իրավական ակտերի համապատասխան:

## **3. Ուսումնառողների իրավունքներն ու պարտականությունները**

3.1 Համալսարանի ուսումնառողները իրավունք ունեն.

- 1) ունենալ արտահայտվելու ազատության, հավաքների ու միավորվելու ազատության իրավունք՝ պայմանով, որ այդ ազատությունները չեն խոչընդոտում դասերի արդյունավետ իրականացմանը, համապատասխանում են բարձրագույն ուսումնական հաստատության քաղաքականություններին, Էթիկայի սկզբունքներին և կանոններին, ինչպիսիք են՝ հարգանքն այլոց նկատմամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքների նկատմամբ,
- 2) գնահատվել արդար և պատշաճ կերպով, տեղեկացված լինել գնահատման չափանիշների մասին՝ համալսարանի համապատասխան քաղաքականությունների համաձայն,
- 3) լսված լինել, եթե որոշում է ընդունվում իր դեմ,
- 4) Ժամանակին տեղեկացված լինել կարգապահական վարույթների կամ գործողությունների մասին,
- 5) հայտնել օրենսդրության կամ Էթիկայի սկզբունքների և կանոնների ցանկացած ենթադրյալ խախտման մասին համապատասխան մարմնին՝ առանց իր համար անբարենպաստ հետևանքներ առաջանալու մտավախության:

## **3.2 Համալսարանի ուսումնառողների պարտականություններն են.**

- 1) ծանոթանալ սույն Կանոնագրքին և բուհի բոլոր այլ քաղաքականությունների դրույթներին,
- 2) հաստատության ներսում կամ դրանից դուրս ցանկացած անձի կամ խմբի առնչությամբ չառաջարկել կամ չընդունել կաշառք կամ որևէ այլ անօրինական ֆինանսական միջոց, կամ չփորձել ստանալ կամ չստանալ որևէ այլ

անձնական օգուտ, որը կարող է ազդեցություն գործել իրենց ուսման, կամ այլ անձանց ուսման կամ աշխատանքի վրա,

3) գերծ լինել խտրական վերաբերմունքից՝ կախված ռասայից, կրոնից, էթնիկ ծագումից, քաղաքական հայացքներից, տարիքից, սեռից, հաշմանդամության կամ անձնական բնույթի այլ հանգամանքից,

4) համալսարանի կողմից սահմանված կարգով՝ համապատասխան մարմնին անմիջապես հայտնել կաշառելու կամ անձնական օգուտ ստանալու ցանկացած փորձի մասին,

5) չվատնել համալսարանի ռեսուրսները, կամ ոչ իրավաչափ ձևով չօգտագործել համալսարանի տնօրինության ներքո գտնվող անձնական կամ առևտրային, այդ թվում՝ մտավոր սեփականության մասին տեղեկությունները՝ անձնական շահ ստանալու նպատակով կամ ի շահ որևէ այլ անձի կամ խմբի,

6) ցուցաբերել հարգալից վերաբերմունք համալսարանի վարչական, պրոֆեսորադասախոսական աշխատակազմի և աշխատակիցների, ինչպես նաև մյուս ուսումնառողների նկատմամբ, պահպանելով էթիկական վարվեցողության ընդհանուր սկզբունքները և կանոնները, և դրական ու կառուցողական ներդրում ունենալ հաստատության ակադեմիական գործունեության մեջ,

7) ուսման կամ հետազոտական գործունեության ընթացքում չբազմապատկարհանալ, կատարել հղումներ և այլոց աշխատանքն իրենց չվերագրել, չներկայացնել այլ անձանց աշխատանքը որպես սեփական աշխատանք կամ չկեղծել արդյունքները և պահպանել անձնական տվյալների պաշտպանության հետ կապված էթիկայի սկզբունքները և կանոնները

8) քննություններին և գնահատման այլ ձևերին մասնակցելիս չխաբել, անհատապես կամ խմբակային չարտագրել այլոց աշխատանքը:

#### **4. Ուսումնառողի փոխհարաբերությունները միմյանց, վարչական,**

##### **պրոֆեսորադասախոսական աշխատակազմի և աշխատակիցների հետ:**

4.1 Ուսումնառողները վարչական աշխատակազմի, պրոֆեսորադասախոսական աշխատակազմի և միմյանց հետ փոխհարաբերվելուց պարտավոր են պահել էթիկայի սկզբունքները ու կանոնները և դրսևորել ազնիվ փոխհարաբերություններ:

4.2 Պարապմունքից ուշանալու դեպքում ուսումնառողը պետք է ներողություն խնդրի և նստի մոտակա ազատ տեղում՝ լսարանում: Դասախոսը կարգապահության խախտման համար իրավունք ունի հեռացնի ուսումնառողին պարապմունքից: Ուսումնառողը պարտավոր է ենթարկվել, չմտնելով վիճարկության մեջ: Դասը ավարտելուց հետո անհրաժեշտ է քաղաքավարի բացատրել ուշացման պատճառը և ներողություն խնդրել դասախոսից:

4.3 Ուսումնառողը չպետք է անհարգալից վերաբերմունք ցուցաբերի համալսարանի վարչական, պրոֆեսորադասախոսական աշխատակազմի և աշխատակիցների, ինչպես նաև մյուս ուսումնառողների նկատմամբ և օգտագործի գռեհիկ ու վիրավորական բառեր, կամ քննարկի նրանց անձնական կյանքը:

4.4 Ուսումնառողը չպետք է՝

-մասնակցի ցանկացած գործողությունների մեջ, որոնք կապված են խաբեության կամ անազնվության հետ,

- ստանա կամ տա օգնություն քննական գործընթացի ժամանակ, գրավոր աշխատանքների կատարման կամ պաշտպանության ընթացքում,

- առանց հարգելի պատճառի բաց թողնի պարապմունքները կամ ուշանա պարապմունքներից,
- պարապմունքների ընթացքում օգտվի հեռախոսից և զբաղվի կողմնակի գործերով,
- առանց դասախոսի թույլտվության լքի լսարանը,
- օգտագործի ոգելից խմիչքներ համալսարանում,
- համալսարանի մասնաշենքերում ծխի:

**5. Ուսումնառողին չի թույլատրվում.**

- 1) ակադեմիական գործընթացի հետ կապված ցանկացած տեսակի տեղեկատվության կամ տվյալների կեղծում,
- 2) դասավանդողի կեղծ տեղեկատվության ներկայացում /դասից բացակայության վերաբերյալ կեղծ պատճառ, աշխատանքի կատարման մասին կեղծ հաստատում/,
- 3) ցանկացած տեսակի արտաքին օգնության օգտագործման փորձ, առանց համապատասխան թույլտվության,
- 4) գործողություններ ուղղված այլ ուսումնառողներին իրենց աշխատանքը կատարելու խանգարմանը: /Օրինակ՝ գրադարանային գրքերում էջերի ոչնչացում, այլ ուսումնառողներին դասի մասնակցելուսն խանգարելը և այլն/:

**6. Կարգապահական տույժեր և խրախուսանքներ.**

- 1) Համալսարանի ուսումնառողների համար սահմանվող կարգապահական տույժերը պետք է հիմնվեն արդարության, թափանցիկության և պատշաճ ծանուցման սկզբունքների վրա և պետք է համապատասխանեն գործող ՀՀ օրենսդրության, համապատասխան իրավական ակտերի և Համալսարանի ներքին կարգապահական կանոնների պահանջներին:
- 2) Համալսարանի ուսումնառողների համար սահմանվող խրախուսանքները պետք է հիմնվեն արդարության և թափանցիկության սկզբունքների վրա և համապատասխանեն գործող օրենսդրության, համապատասխան իրավական ակտերի և Համալսարանի ներքին կարգապահական կանոնների պահանջներին:
- 3) Ուսումնառողը իրավունք ունեն բողոքարկել կարգապահական տույժ կիրառելու հարցով պատասխանատու մարմնի որոշումը՝ բանավոր կամ գրավոր:
- 4) Ուսումնառողը բանավոր կամ գրավոր բողոքրկումը կարող են ներկայացնել պատասխանատու վերադաս մարմնին:
- 5) Ուսումնառողը պատասխանատու վերադաս մարմնի բողոքարկման արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում, ՀԱԱՀ Էթիկայի հանձնաժողովի կանոններով սահմանված կարգով կարող է դիմել Էթիկայի հանձնաժողով՝ հարցը լրացուցիչ քննելու համար: